245ա)։ — *Օգոստ. 11, Կիր. «*Կոմիտասն *ծանուցում պատկերին, ԺԶ ղրշ. եկաւ» (Թղ. 246բ)։ — Օգոստ. 22. «Բսուրն ելաւ ի նաւն և նաւն՝ ի ծովն.* Կոմիտասն *գնաց ի նաւն մարդ գրել (Երուսաղէմ մեկնող ուխտաւորները արձանագրել)» (Թղ. 247ա)։*

Ամդեցի նոյն օրը ուխտաւորներուն կը միանայ ու անոնց հետ Սամաթիայէն կը նաւէ դէպի Թէքիրտաղ՝ հետը առնելով Տէր Կոմիտասը։ Նաւը կը հանդիպի Արակլու պուռունը *(հրուանդան), ապա Արակլիա և Օգոստ. 23ի գիշերը կը հասնի Թէքիրտաղ։ Այնտեղ Երուսաղէմի 121 ուխտաւորներուն համար ուրիշ նաւ մը կը վարձէ և Օգոստ. 27ին կը գանձէ անոնց դարպասական նուէրը. ապա ուխտաւորներու նաւը ճամբայ կ'ելլէ։ Ամդեցի Տէր Կոմիտասի հետ 15 օր կը մնայ Թէքիրտաղ, ու Սեպտ. 9ին անկէ կը մեկնի և Էրէկլի, Մեծ Չէքմէճէ ու Այստեփանոս հանդիպելով՝ Սեպ. 11ին կը դառնայ Կ. Պոլիս և ըստ սովորութեան կ'իջեւանի Սուլումանաստրըի Ս. Գէորգ եկեղեցին։ Թէքիրտաղի մէջ Սեպտ. 6ին կ'արձանագրէ. «Կէլիպօլցի էրէցն աջ առաւ միջնորդութեամբ* Կոմիտասին *եւ գնաց ի տեղի իւր» (Թղ. 247բ)։ — Սեպտ. 30. «Ելաք ի քաղաքէն, ընդ մեզ Գէորգն (Տէր Մարտիրոս) և* Կոմիտասն, *արտաքոյ պարսպէն մինչ Թօփղափուն, և գնացեալ նստաք Ղարաքեհեայի չիֆթլիկի առջեւն ի վերայ ճանապարհին. Ժ սահաթին եկեալ Նէմցէուէլչին գնաց իւր աշխարհն. թագաւորն ի Տաւութ փաշան էր . . . եւ դարձաք երեկոյն» (Թղ. 248ա)։ — Հոկտ. 9. «Գիշերս Գէորգն (Տէր Մարտիրոս) և* Կոմիտասն *ընդ մեզ. երկու սահաթ նստաք» (անդ)։ —* 1701 *Յունուար* 19. *«Ժամն չատ ուշ. ժամարար Տէր* Կոմիտասն» *(Թղ. 251բ)։ — Փետր. 6. «Գնացաք ի Պալըխլին, ղէհվէ խմեցաք եւ դարձաք (ի Սամաթիա). զ*Կոմիտասին *զգուռն ծեծեցաք՝ չբացին» (Թղ. 252ա)։—*